ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022 թվականի փետրվարի 8-ին ժամը 12:25-ին Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 40 հասցեում տեղի ունեցավ Փարաքար համայնքի ավագանու հերթական՝ անդրանիկ թիվ 1 նիստը, որին մասնակցում էր Փարաքար համայնքի ավագանու 21 անդամներից 11-ը, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Փարաքար համայնքի ավագանու հերթական թիվ 1 նիստը վարում էր համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը: Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Մ.Քեյանը: Նախագահողը՝ համայնքի ղեկավարը շնորհավորեց նստաշրջանի բացման կապակցությամբ, նշելով որ կարվի ամեն ինչ համայնքների բարեկեցության բարձրացման համար: Ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց քննարկել դրանք ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի հերթական նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին
3. Համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը սահմանելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի սեփականությունը հանդիսացող գույքն օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
7. Հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին
8. Հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին
9. Մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին
10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու նիստի օր սահմանելու մասին

Օրակարգի **1-ին հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը: Ներկայացնելով Փարաքար համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին նախագիծը: Ներկայացրեց հիմնական դրույթները, որոնք ներառված են կանոնակարգում: Կանոնակարգը տիպային տարբերակ է:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի **2-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը: Ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզի «Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին որոշման բովանդակությունը, հարցեր չեղան զեկուցողին:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի **3-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը: Ներկայացրեց Փարաքար համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին որոշման բովանդակությունը, հարցեր չեղան զեկուցողին:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը: Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը սահմանելու մասին որոշման նախագիծը: Այն հարցին թե ինչու են տարբերվում համայնքի ղեկավարի ու ավագանու նստավայրերը, համայնքի ղեկավարը պարզաբանեց, որ ավագանու նստավայրը լինելու է Նաիրի փողոց թիվ 40 հասցեն:

Հարցեր զեկուցողին

Մարաիմ Իսպիրյան – լավ կլինի , որ ավագանու նստավայրը լինի համայնքապետարանի շենքում,

Գոռ Սարիբեկյան- քանի որ համայնքապետարանի շենքը լինելու է գեր ծանրաբեռնված, ժամանակավոր նպատակահարմար է ավագանու նստավայրը լինի նշված հասցեն, հետագայում հնարավոր է փոփոխվի: Այս հարցը կքննարկենք նոր շենքի շահագործումից հետո:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը: Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի սեփականությունը հանդիսացող գույքն օգտագործման իրավունքով տրամադրելու մասին որոշման նախագիծը: Ելույթի կարգով Կ.Արթենյան - նշված գազատարը կառուցվել է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, քանի որ չունենք պայմանագիր Գազպրոմ Արմենիայի հետ հնարավոր չի լինում միացնել նշված փողոցների գազատարը: Բնակիչները հնարավորություն չունեն օգտվելու բնական գազից: Գույքը հանձնվում է անորոշ ժամկետով, եթե ցանկություն լինի հնարավոր է միակողմ լուծել պայմանագիրը:

Առաջարկ եղավ նաև հանձնել մեկ տարի ժամանակով

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը: Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու,Փարաքարի համայնքապետարանի

աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագիծը:
Համայնքի ղեկավարի տեղակալի, խորհրդականի , մամլո քարտուղարի աշխատավարձերը որոշակի իջեցնելու առաջարկ ունենք ելնելով քննարկումներից: Բարեվարքության պատասխանատուի գործառույթները որոշվել է աշխատակազմում վերապահել աշխատակազմի քարտուղարին:

Առաջարկում եմ ևս մեկ անգամ վերանայել աշխատակազմը
Արաքսա Վարդանյան - Առաջին տեղակալի աշխատավարձը պետք է տարբերվի մյուս տեղակալների աշխատավարձից: Աշխատավարձից բացի կա նաև մոտիվացման այլ տեսակներ, օրինակ խրախուսանքի կիրառումը: Լավ աշխատողների համար կարելի է դա կիրառել:

Գ.Սարիբեկյան առաջարկում եմ ,,գովազդի տուրիզմի և այլն,, բաժնում ավելացնել նաև արտաքին կապեր բառերը:

Մ.Իսպիրյան – հնարավոր է , որ աշխատավարձերը լինեն տարբեր,

Գ.Սարիբեկյան- դա հնարավոր չէ, նույն դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողները, բաժնի պետերը պետք է ստանան նույն աշխատավարձը, դա օրենքի պահանջն է:

Առաջարկ եղավ բոլորի աշխատավարձերը իջեցնել 10% -ի չափով, բացառությամբ տեխնիկական սպասարկող անձնակազմից:

Լ.Գյուլնազարյան – տնտեսումների միջոցով հնարավորություն կունենք համայնքներում ավելի շատ աշխատանքներ կատարել:

Աշխատակազմի քարտուղարի աշխատավարձը կլինի 342 000 դրամ:

Է.Երիցյանը առաջարկեց ունենալ գլխավոր ճարտարապետի և օգտանականի հաստիք՝ հղում անելով ՏԻՄ օրենքին:

Ա.Վարդանյան –հարցրեց,թե ինչու չկան պահակների հաստիք,

Գ.Սարիբեկյան – պետք է ունենանք երեք հերթափոխով աշխատող պահակներ, իսկ դրա փոխարեն կունենք տեսախցիկներ, որն ավելի պրակտիկ և արդյունավետ է:

Որոշվեց հայտարարել ընդմիջում 20 րոպե և շարունակ նիստը:

Ընդմիջումից հետո որոշվեց տվյալ հարցի քննարկումը թողնել վերջում:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ՔՀևԸ բաժնի պետ Հակոբ Միքաելյանը, ներկայացրեց Հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին որոշման նախագիծը, որը վերաբերում էր «ԱՐՐՈ» ՍՊԸ –ին՝ 04-074-0027-0020 կադաստրային համարով 3-րդ կարգի ջրովի վարելահողին:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ՔՀԼԸ բաժնի պետ Հակոբ Միքաելյանը, ներկայացրեց Հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին որոշման նախագիծը, որը վերաբերում էր «ԱՐՐՈ» ՍՊԸ –ին՝ 04-074-0027-0028 կադաստրային համարով 3-րդ կարգի ջրովի վարելահողին:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 9 -րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գոռ Սարիբեկյանը, ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու.Մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին որոշման նախագիծը.նշեց, որ լինելու է 4 հանձնաժողով.

1) ֆինանսավարկային և տնտեսական հարցերի Հանձնաժողով, որը զբաղվում է բյուջեի, վարկերի, փոխառությունների, հարկերի, տուրքերի, վճարների, առևտրի, սպասարկման, գովազդի, տրանսպորտի և գույքի կառավարման հարցերով,

2) մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի Հանձնաժողով, որը զբաղվում է մշակույթի, կրթության, զբոսաշրջության, երիտասարդության, սպորտի, սոցիալական աջակցության, հասարակայնության և արտաքին կապերի հարցերով,

3) քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի Հանձնաժողով, որը զբաղվում է ճարտարապետության, քաղաքաշինության, հողօգտագործման, ճանապարհաշինության, բնապահպանության, բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսության հարցերով,

4) իրավական հարցերի Հանձնաժողով, որը զբաղվում է Ավագանու, Համայնքի ղեկավարի, Համայնքապետարանի աշխատակազմի իրավական ակտերի ուսումնասիրության և գործող օրենսդրությանը դրանց համապատասխանեցման, Համայնքին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունների նախագծերի առաջադրման, ինչպես նաև շրջանառության մեջ դրված օրենսդրական նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման հարցերով:

Հարցեր չեղան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Դավիթ Մինասյան» կուսակցությունների դաշինք խմբակցությունները նիստը վարողին ներկայացրեցին խմբակցության ղեկավար և քարտուղար նշանակելու մասին որոշումներն ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Դավիթ Մինասյան» կուսակցությունների դաշինք խմբակցությունների կանոնադրությունները:

Օրակարգի 9 -րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գոռ Սարիբեկյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու նիստի օր սահմանելու մասին որոշման նախագիծը:

Հարցեր չեղան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Նորից անդրադարձ եղավ օրակարգի 6-րդ հարցին,

Գ.Սարիբեկյան խմբակցությունների ավագանու անդամների հետ քննարկումների արդյունքում որոշեցինք և առաջարկում եմ համայնքի վարչական պաշտոններ զբաղեցնող անձնակազմում ներառել գլխավոր ճարտարապետի հաստիքը, դրույքաչափը սահմանել 360 000 ՀՀ դրամ, կա առաջարկ ունենալու նաև գլխավոր ճարտարապետի օգնական, դա ներառել հայեցողական պաշտոններում , 220 000 ՀՀ դրամ դրույքաչափով, ՔՀ բաժնում մեկ հաստիք պակասեցնել թվաքանակը 10-ը կլինի 9:

Կ.Արթենյան առաջարկեց ճարտարապետի հաստիքային դրույքաչափը լինի 350 000 ՀՀ դրամ:

Է.Երիցյանը նշեց նաև, որ քարտուղարությունում պետք է լինեն անձիք ովքեր զբաղվելու են ավագանու խմբակցություններին սպասարկելու համար:

Գ.Սարիբեկյան – գործավարների պահով քննարկեցին որ պետք է լինեն 4-ը,

Համայնքի գործունեությունը պատշաճ իրազեկելու և լուսաբանելու համար անհրաժեշտ է ֆոտոնկարչի, ինչպես նաև տնտեսվարի հաստիք

ՀԾ դրույքաչափերը համամասնորեն նվազեցնել 10 տոկոսի չափով:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: